ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 138-Ա
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Կապան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի չորրորդ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտի հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի՝ 2023թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2024

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող հողերի կառավարման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում, Կապան համայնքի Աճանան գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.04235 հա այլ հողամասը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 21/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Գործարանային փողոցի թիվ 20/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Աճանան բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու, 0.05 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

14. Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 0.2 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

15. Մշակութային գործունեության իրականացման նպատակով Կապան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները եվ սահմանափակումները սահմանելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը որոշելու մասին

Կողմ(19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ _____

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ _____

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____

ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ _____

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ _____

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱԼԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ _____

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ _____

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ _____

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ _____

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 27

ք. Կապան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 139-Ա
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով և 82.1-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի՝ էլեկտրոնային գործիք և ամփոփաթերթ:

Կողմ(19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ _____
ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ _____
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____
ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ _____
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ _____
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ _____
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ _____
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ _____

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ _____

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ _____

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 27

ք. Կապան

Հավելված
Կապան համայնքի ավագանու
27 դեկտեմբեր 2023թ. թիվ 139-Ա որոշման

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ /ՆԱԽԱԳԻԾ/
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Հ/Հ	Պարտադիր խնդիր	Գումարը	ԿԶՆ թիրախներ	ԿԶՆ ցուցանիշներ	Ծանոթություն*
	3. Համայնքի գույքի կառավարում	**1 867 711 789**			
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	732 357 000	11.3	11.3.2	
2	Կապանի համայնքապետարանի մասնաշենքի ուժեղացում, վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում	951 071 852	11.3	11.3.2	2023 թվականի սուբվենցիա
3	Տավրուս գյուղի նոր վարչական շենքի կառուցում	49 446 700	11.3	11.3.2	
4	Օխտար գյուղի վարչական շենքի կառուցում	51 828 900	11.3	11.3.2	
5	Նորաշենիկ գյուղի վարչական շենքի նորոգում	8 257 965	11.3	11.3.2	2023 թվականի սուբվենցիա
6	Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի շենքի մասնակի նորոգում և ջեռուցման համակարգի վերականգնում	26 175 344	4.3	4.3.1	2022 թվականի սուբվենցիա
7	Ներքին Խոտանան գյուղում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում	15 189 888	11.3	11.3.2	2022 թվականի սուբվենցիա
8	Սևաքար բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում	33 384 140	11.3	11.3.2	
	4. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն	**2 148 907 626**			
9	Կրթություն /նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների պահպանում/	1 208 509 100	4.2	4.2.2	
10	«Կապանի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում և տարածքի բարեկարգում	299 648 194	4.2, 4.ա	4.2.2, 4.ա.1	2023 թվականի սուբվենցիա
11	«Կապանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում և տարածքի բարեկարգում	432 610 591	4.2, 4.ա	4.2.2, 4.ա.1	2023 թվականի սուբվենցիա
12	«Կապանի թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի վերակառուցում և տարածքի բարեկարգում	186 163 883	4.2, 4.ա	4.2.2, 4.ա.1	2022 թվականի սուբվենցիա
13	Արծվանիկ գյուղի ՆՈՒՀ-ի հարևանությամբ տարածքի բարեկարգում	18 975 858	4.2	4.2.2	2023 թվականի սուբվենցիա
14	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի ձեռքբերում	3 000 000	4.2	4.2.2	
	5. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	**775 005 373**			
15	Հանգիստ, մշակույթ և կրոն /Կապանի մշակույթի կենտրոն, Կապանի ակումբագրադարանային միավորում, Կապանի արվեստի թանգարան, Վազգեն Սարգսյանի անվան մանկական գրոսայգի ՀՈԱԿ-ների պահպանման ծախս, մարզամշակութային, երիտասարդական միջոցառումներ, փառատոներ և այլն/	405 420 000	4.1, 4.3	4.1.1, 4.3.1	
16	Կապան քաղաքի Շինարարների 8 հասցեում ակումբ-գրադարանի նորոգում	50 961 812	4.1, 4.3, 4.4	4.1.1, 4.3.1, 4.4.1	2023 թվականի սուբվենցիա
17	Կապան քաղաքի Բաղաբերդ 6 հասցեում ակումբ-գրադարանի նորոգում	27 541 891	4.1, 4.3, 4.4	4.1.1, 4.3.1, 4.4.1	2023 թվականի սուբվենցիա
18	Կապան քաղաքի Բաղաբերդ 14 հասցեում գրադարանի նորոգում	26 502 910	4.1, 4.3, 4.4	4.1.1, 4.3.1, 4.4.1	
19	Կապան քաղաքի Դավիթ Բեկ 8 հասցեում ակումբ-գրադարանի նորոգում	84 886 350	4.1, 4.3, 4.4	4.1.1, 4.3.1, 4.4.1	2023 թվականի սուբվենցիա
20	Տանձավեր բնակավայրի ակումբի շենքի նորոգում	50 915 960	4.1, 4.3, 4.4	4.1.1, 4.3.1, 4.4.1	
21	Առաջաձոր բնակավայրի ակումբի շենքի նորոգում	48 247 300	4.1, 4.3, 4.4	4.1.1, 4.3.1, 4.4.1	

	6. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն/17. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը	**37 771 100**			
23	Սոցիալական պաշտպանություն /Կապանի մանկական կենտրոն ՀՈԱԿ-ի պահպանում և խոցելի ընտանիքներին հասցեական և թիրախավորված աջակցության տրամադրում/	37 771 100	3.4, 2.1	3.4.2, 2.1.1	
	7. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	**889 826 221**			
24	Աթլետիկական փակ մարզասրահի կառուցում	15 000 000	4.2	4.3.1	
25	Կապան քաղաքի Շինարարների փողոցի թիվ 15 և թիվ 17 բ/բ շենքերի հարևանությամբ խաղահրապարակի և մարզադաշտի վերանորոգում և հանգստյան գոտու կազմակերպում	37 937 188	11.7	11.7.1	2022 թվականի սուբվենցիա
26	Բաղաբերդ թաղամասի թիվ 16, 17 և 21 բ/բ շենքերի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	87 288 773	11.7	11.7.1	
27	Բաղաբերդ թաղամասի թիվ 10 շենքի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	38 096 221	11.7	11.7.1	
28	Զորք թաղամասի թիվ 4 և 5 շենքերի հարևանությամբ խաղադաշտի նորոգում, մանկական խաղահրապարակի կառուցում	104 353 290	11.7	11.7.1	
29	Դավիթ Բեկ թաղամասի թիվ 3 շենքի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	37 006 488	11.7	11.7.1	
30	Մ. Հարությունյան փողոցի թիվ 1 բ/բ շենքի և Ողջի գետի միջանկյալ հատվածում հանգստի գոտու, մանկական խաղահրապարակի և խաղադաշտի կառուցում	241 657 610	11.7	11.7.1	
31	Երկաթուղայինների փողոցի թիվ 7 և 9 բ/բ շենքերի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	18 237 914	11.7	11.7.1	
32	Երկաթուղայինների փողոցի թիվ 13 բ/բ շենքի հարևանությամբ մանկական խաղահրապարակի կառուցում	27 078 743	11.7	11.7.1	
33	Կապանի համայնքապետարանի հարակից այգու նորոգում	144 715 463	11.7	11.7.1	
34	Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 22 և 24 շենքերի միջանկյալ հատվածում խաղադաշտի նորոգում և մանկական խաղահրապարակի կառուցում	39 722 497	11.7	11.7.1	
35	Թումանյան փողոցում՝ արվեստի դպրոցի հարևանությամբ ֆուտբոլի դաշտի կառուցում	59 229 030	11.7	11.7.1	
36	Հ. Ավետիսյան թիվ 12 բ/բ շենքի հարևանությամբ հանգստի գոտու և մանկական խաղահրապարակի կառուցում	22 808 837	11.7	11.7.1	
37	Աճանան գյուղում մանկական խաղահրապարակի կառուցում	11 694 167	11.7	11.7.1	
38	Ագարակ գյուղում մանկական խաղադաշտի տեղադրում	5 000 000	11.7	11.7.1	
	9. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում	**1 365 064 280**			
39	Կապան քաղաքի թունելից մինչև Բաղաբերդ թաղամասի վերջնամասը փողոցային լուսավորության համակարգի կառուցում	122 877 406	11.2	11.2.1	2023 թվականի սուբվենցիա
40	Ծաղկապատ տարածքների, կանաչ գոտիների ընդլայնմանն ուղղված աշխատանքների իրականացում	5 000 000	11.7	11.7.1	
41	Դավիթ Բեկ բնակավայրի ջրամատակարարում	78 591 420	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	2022 թվականի սուբվենցիա
42	Ուժանիս բնակավայրի խմելու ջրի կառուցում	86 777 151	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	2023 թվականի սուբվենցիա
43	Ներքին Հանդ բնակավայրի խմելու ջրի մատակարարման ապահովում	214 194 920	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	
44	Սզնակ բնակավայրում խմելու ջրի մատակարարման ապահովում	223 018 120	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	
45	Դիցմայրի բնակավայրում խմելու ջրի մատակարարման ապահովում	151 180 860	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	
46	Աղվանի գյուղի խմելու ջրագծի կառուցում	75 711 769	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	
		57 504 405	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	

48	Արծվանիկ գյուղի խմելու այլընտրանքային ջրագծի կառուցում	183 663 180	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	
49	Վերին Խոտանան գյուղի խմելու ջրի ջրագծի նորոգում	166 545 049	6.4, 6.բ	6.4.1, 6.բ.1	
10. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում		**2 224 729 418**			
50	Փողոցային լուսավորություն	35 000 000	11.2	11.2.1	
51	Կապան քաղաքի Ավետիսյան փողոցի N 2, 4, 6, 28, 30, 32, 34 և Պապյան փողոցի N 5, 6, 7, 8, 9, 15, 16, 17, 18, 19, 20, 22, 24 և 26 շենքերի բակերի ասֆալտապատում	79 995 408	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	2022 թվականի սուբվենցիա
52	Գ. Նժդեհ փողոցի աջակողմյան մայթի նորոգում	19 241 240	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	2023 թվականի սուբվենցիա
53	Արծվանիկ բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	77 313 840	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	2023 թվականի սուբվենցիա
54	Մ. Ստեփանյան փողոցի մի հատվածի ասֆալտապատում /ՔԿԱԳ-ի շենքից մինչև <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի դիմացի կամուրջ/	156 689 710	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
55	Դավիթ Բեկ հրապարակից Դավիթ Բեկ թաղամաս տանող ճանապարհի թիվ 2, թիվ 4, թիվ 5, թիվ 7, թիվ 8, թիվ 10, թիվ 12 բ/բ շենքերի բակերի և թաղամասերից Սպանդարյան փողոց տանող ճանապարհի նորոգում	207 858 530	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
56	Կաղնուտ բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում	55 710 220	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
57	Շղարշիկ թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատում	156 320 300	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
58	Ազատամարտիկների փողոցի մի հատվածի /Մ. Ստեփանյան փողոցի թիվ 2 բ/բ շենքից մինչև Ազատամարտիկների փողոցի թիվ 5 բ/բ շենքի վերջնամասը/, Ազատամարտիկների փողոցի թիվ 5 և թիվ 7 բ/բ շենքերի բակերի և Մ. Ստեփանյան փողոցի թիվ 2, թիվ 4 և թիվ 6 բ/բ շենքերի բակերի նորոգում և ասֆալտապատում	89 283 900	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
59	Երկաթուղայինների փողոցի թիվ 1, թիվ 3, թիվ 5 և թիվ 6 բ/բ շենքերի բակերի նորոգում և ասֆալտապատում	87 443 270	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
60	Հ. Ավետիսյան փողոցի 1, 1ա, 2ա, 24, 26, 8, 10, 12, 16, 18, 20, 22 և Մ. Պապյան փողոցի 1, 2, 4, 6, 10, 13, 16, 20, 20ա բ/բ շենքերի բակային հատվածների նորոգում և ասֆալտապատում	295 230 820	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
61	Արամ Մանուկյան փողոցի 1-ին նրբանցքի ճանապարհի և ձախակողմյան մայթի նորոգում և ասֆալտապատում	240 966 140	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
62	Թումանյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ	75 419 330	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
63	Կապան քաղաքի Արամ Մանուկյան, Թումանյան և Հ. Ավետիսյան փողոցների հատման կամրջի երթևեկելի մասի, մայթերի և բազրիքների նորոգում	41 346 500	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
64	Կապան քաղաքի Սպանդարյան, Մ. Հարությունյան և Շահումյան փողոցների հատման կամրջի երթևեկելի մասի, մայթերի և բազրիքների նորոգում	51 997 100	11.2, 11.7	11.2.1, 11.7.1	
65	Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրում, հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում և Վաչագան գետի ավազանի էսթետիկ տեսքի վերականգնում /Գարեգին Նժդեհի հուշահամալիրից մինչև Բժշկական կենտրոն ՓԲԸ հարակից կամուրջ/	554 913 110	6.6	6.6.1	
12. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացումը		**8 000 000**			
66	Գետերի և սելավատարների մաքրման աշխատանքների իրականացում	5 000 000	11.6	11.6.1	
67	Սեյսմակայունության գնահատման և բարձրացման նպատակով շենքերում անհրաժեշտ հետազոտությունների կատարում	3 000 000	11.5	11.5.2	
13. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում		**630 086 480**			
68	Սյունիք, Սզնակ, Դիցմայրի և Բարգուշատ գյուղերի ոռոգման	473 026 580	6.5	6.5.1	

70	Գեղանուշ, Ճակատեն, Շիկահող, Ձորաստան, Աղվանի, Անտառաշատ, Շիշկերտ գյուղերի արոտավայրեր տանող ճանապարհների անցանելիության բարելավում	152 059 900			
14. Շրջակա միջավայրի պահպանություն		**1 201 761 978**			
71	Շրջակա միջավայրի պահպանություն՝ «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի պահպանում. աղբահանության. սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպում, աղբարկղների և օրգանական աղբի կուտակումների մշակումների իրականացում /ախտահանում/, «Կապանի ՊԼԱՍՏԻՆ» ՀՈԱԿ-ի պահպանում և այլն	779 799 100	11.6	11.6.1	
72	Վաչագան գետի հունի մաքրում, հայելային պատկերների ու հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում /Բժշկական կենտրոնին հարակից կամրջից մինչև մարզպետարանի կամուրջ/	160 594 858	6.6	6.6.1	2023 թվականի բնապահպանական սուբվենցիա
73	Վաչագան գետի հունի մաքրում, հայելային պատկերների ու հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում /Սյունիքի մարզպետարանի հարակից կամրջից մինչև Ողջի գետի հատման հատված/	261 368 020	6.6	6.6.1	
15. Համայնքում զբոսաշրջության զարգացման խթանում		2 000 000			
74	Զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցություն	1 000 000	8.9	8.9.2	
75	Պատմամշակութային հուշարձանների պահպանության աջակցություն՝ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ	1 000 000			
16. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում		**356 464 000**			
76	Թումո կենտրոնի ստեղծում	355 464 000	4.3, 4.4	4.3.1, 4.4.1	
77	Երիտասարդական ակումբների հիմնում /հիմնման աջակցություն/	1 000 000			
18. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծում		0			
78	Գյուղերի հասարակական շենքերում տեղակայված բուժկետները նորոգվում են այդ շենքերի նորոգման ընթացքում		3.4	3.4.1	
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		**11 507 328 265**			

Աշխատակազմի քարտուղար Ն. Շահնազարյան **Նելլի Շահնազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 140-Ն
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում /այսուհետ՝ նաև Համայնք/ 2024 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. 2024 թվականի համար Համայնքի վարչական տարածքում սահմանել հետևյալ տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝

1) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար վճարները՝ համաձայն Հավելված 2-ի,

2) Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար Համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները՝ համաձայն Հավելված 3-ի:

3) Համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների դիմաց վճարները՝ համաձայն Հավելված 4-ի:

3. Սահմանել, որ տեղական տուրք կամ վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

4. Սույն որոշման 1-ին հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ բնակավայրերը.

10 – 16 գոտիներ՝ Կապան քաղաքն իր թաղամասերով,

15-րդ գոտի՝ Սյունիք գյուղական բնակավայր,

17 - 20 գոտիներ՝ Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջաձոր, Արծվանիկ, Բարգուշատ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Դիցմայրի, Եղեգ, Եղվարդ, Խդրանց,

Նորաշենիկ, Շիկահող, Շիշկերտ, Շրվենանց, Չափնի, Սզնակ, Սրաշեն, Սևաքար, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Օխտար գյուղական բնակավայրերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ(19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ _____

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ _____

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____

ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ՎԱՀԱՆ ՂԱՋԱՐՅԱՆ _____

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ _____

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ՀԱՄՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ _____

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ _____

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ _____

Դեմ (0)
Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 27
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2023թ. դեկտեմբերի 27-ի N 140-Ն որոշման

Աղյուսակ N 1

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Որոշմամբ սահմանված դրույքաչափը՝ այդ թվում բազային (ՀՀ դրամ)
1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.	
1) հիմնական շենքերի և շինությունների համար՝	
ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամ.	15000
բ. մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.	15000
2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝	
ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	90000 60000 30000
բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 հազար դրամ.	

- 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	300000 200000 100000
գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	600000 400000 200000
դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:	
3) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝	
ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.	30000
բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.	50000
գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.	50000
դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.	100000
4) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝	
ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար –	15000 10000 5000

գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	
բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	30000 20000 10000
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝ 1) այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝ 60 հազար դրամ ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ վաթսուն հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	180000 120000 60000
բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	600000 400000 200000

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից	1200000 800000 400000
դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:	
3. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.	3000
2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,	
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության	

համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:	
4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.	5000
5. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	300000
6. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	300000
7. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	300000
8. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	150000
9. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	150000
10. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	150000

11. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ՝	60000
12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.	20000
13. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ – գործակից՝ 1,5	75000
14. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,0 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	10000 5000 3000
2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ	*12000* 18000

թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	6000 3600
3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում - գործակից՝ 0,3	*18000* 27000 9000 5400
4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	*24000* 36000 12000 7200
5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	*40000* 60000 20000 12000
6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում - գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	100000 150000 50000 30000
15. Համայնքի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների	

փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,0 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	 10000 5000 3000
2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	*12000* 18000 6000 3600
3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	*14000* 21000 7000 4200
4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	*22000* 33000 11000 6600
5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ	*26000* 39000 13000

թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	7800
6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	*46000* 69000 23000 13800
16. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.	350
17. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
1) առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ.	50000
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	150000
3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ.	300000
4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ.	750000
5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ - գործակից՝ 1,5	750000
6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ - գործակից՝ 1,5	225000
18. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
1) հիմնական շինությունների ներսում՝	

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամից մինչև հինգ հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	7500
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տասը հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	15000
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	22500
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	30000
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	45000
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	75000
2) ոչ հիմնական շինությունների ներսում՝	
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամից մինչև հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	1500
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	3000
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ - գործակից՝ 1,5	6000
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ.	8000
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ.	15000
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.	25000
19. Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ - գործակից՝ 1,5	7500
20. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական	

նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.	2000
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.	3500
3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.	0
4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.	1500
5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով.	375
6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով.	150
21. Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5	150000
22. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.	10000
23. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ – գործակից՝ 0,75	375000
24. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ – գործակից՝ 0,3	750000
2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ - գործակից՝ 0,3	1500000
3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների	2100000

համար՝ յոթ միլիոն դրամ - գործակից՝ 0,3	
4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ - գործակից՝ 0,3	3000000
25. Համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝	
1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, շոգեբաղնիքի, սաունայի և մերսման սրահի (բացառությամբ բուժական մերսման սրահների) համար՝ օրացուցային տարվա համար՝ տասը հազարից մինչև քսան հազար << դրամ - գործակից՝ 1,5	30000
2) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար << դրամ - գործակից՝ 1,5	450000
26. Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ 10 (տասը) հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար՝	10000

Աղյուսակ N 2

Կապան համայնքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	20000
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	7000
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	3000
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5000
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	
1) յուրաքանչյուր մասնակցից՝	5000 /հինգ հազար/
2) յուրաքանչյուր դիտորդից՝	500 /հինգ հարյուր/
6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	1000

7. Համայնքի վարչական տարածքում, սակայն բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումների անցկացնելու համար՝	
1) մեծ տաղավարների համար՝	5000
2) փոքր տաղավարների համար՝	3000
7. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.	0
8. համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար.	1000
9. համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	
1) Կապան քաղաքի համար /բացառությամբ Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերի/	5000
2) Կապան համայնքում ընդգրկված գյուղերի և Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերի համար՝	2000
10. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները կատարելու դեպքում տեղական վճար՝	30000

Աշխատակազմի քարտուղար Ն. Շահնազարյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2023 թվականի -դեկտեմբերի 27-ի N 140-Ն որոշման

Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար վճարները

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 250 դրամ,

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 75 դրամ,

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների /ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների/, հանգստի տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 դրամ,

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով /այդ թվում՝ ավտոկայանատեղի/՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված, ինչպես նաև տարբերակված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարի չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով:

7) շինություններում /այդ թվում՝ առանձնացված, ինչպես նաև տարբերակված

